



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն  
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ՔԱՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ,

գ. Քարաձոր, փողոց 1, շենք 13 հեռ. 098-56-16-00

ՈՐՈՇՈՒՄ

«10» փետրվարի 2020 թվականի N03-Ա

ՔԱՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԱՆՐԱՔԵԻ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասին, Հանրաքվեի մասին Հայաստանի հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասին և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին համապատասխան՝

Որոշում եմ.

1. 2020 թվականի ապրիլի 5-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի անցկացման համար Լոռու մարզի Քարաձոր համայնքի տարածքում տեղամասային կենտրոն սահմանել՝ դպրոցի շենքը (հասցեն՝ գ. Քարաձոր 1-ին փողոց 11 շենք):
2. Սույն որոշման մասին տեղեկացնել ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տարածքային ստորաբաժանմանը, թիվ 22 տարածքային ընտրական հանձնաժողովին և տարածքը տիրապետողին:

Համայնքի ղեկավար՝

Հ. Ռոստոմյան

2020 թվական փետրվարի 10 գ. Քարաձոր



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն  
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ՔԱՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱԿԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ,

գ. Քարածոր, փողոց 1, շենք 13 հեռ. 098-56-16-00

ՈՐՈՇՈՒՄ

«10» փետրվարի 2020 թվականի N04-Ա


ՔԱՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԱՆՐԱՔԿԵԻ ՔԱՐՈՉՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐԸ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆԿՃԱՐ ՏԵՂԵՐ  
ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասին, Հանրաքվեի մասին Հայաստանի հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասին և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին համապատասխան՝

Որոշում եմ.

1. 2020 թվականի ապրիլի 5-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեին ԱՅՈ և ՈՉ քարոզչության կողմերի կողմից քարոզչական պաստառներ փակցնելու համար համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝
  - 1) Մատինյան Արթուրիկի տան ճակատային մաս՝ 1-ին փողոց տուն 26, 5 քառ.մետր (սեփականատիրոջ համաձայնությամբ):
  - 2) Բաղդասարյան Զաքարի տան ճակատային մաս՝ 1-ին փողոց տուն 29, 5 քառ.մետր(սեփականատիրոջ համաձայնությամբ):

Համայնքի ղեկավար՝



Հ. Ռոստոմյան